

**« ՀԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ  
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

21.06. 2013թ.

գ. Սպանդարյան

Համաձայն « տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 190-Ա հրամանի և ի կատարումն « Հիրակի մարզպետի 2013 թվականի մայիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սպանդարյանի համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 41 կարգադրության, աշխատանքային խումբը մասնակցությամբ՝ « Հիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՎՎ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի պետ Ռուբեն Հարությունյանի /խմբի ղեկավար/, « Հիրակի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Մարիամ Գյոդակյանի /խմբի անդամ/, « Հիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Զարիկ Մուրադյանի /խմբի անդամ/, « Հիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի /խմբի անդամ/, « Հիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի /խմբի անդամ/, « Հիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի /մարզային հողային պետական տեսչության/ գլխավոր մասնագետ Արտյոմ Սարգսյանի /խմբի անդամ/, « Հիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՎՎ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի առաջատար մասնագետ Նաիրա Մարտիրոսյանի /խմբի անդամ/, « Հիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի առաջատար մասնագետ Սարգիս Մելոյանի /խմբի անդամ/, ինչպես նաև « Հիրակի մարզի Սպանդարյանի գյուղական համայնքի ղեկավար Վաղինակ Բաղդասարյանի, Սպանդարյանի համայնքում իրականացրել է վարչական հսկողություն՝ 2010 թվականի մայիսի 1-ից մինչև 2013 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակաշրջանի համար:

**ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ**

Վարչական հսկողությունը սկսվել է 2013 թվականի հունիսի 3-ին և ավարտվել՝ 2013 թվականի հունիսի 14-ին, արդյունքում պարզվել է հետևյալը՝

- 1) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ համայնքի նորընտիր ավագանին ընդունել է իր կանոնակարգը /2012 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 22/:

2) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթների՝ համայնքի ավագանին հաստատել է համայնքի 2009-2012թթ. զարգացման ծրագիրը /2009 թվականի հունվարի 20-ի արձ. թիվ 1/:

Ծրագրով նախատեսված թվով 5 ծրագրային աշխատանքներից կատարվել է 1-ը, գիշերային լուսավորության ցանցի անցկացման, ներհամայնքային ճանապարհների բարելավման, մշակույթի տան ու գյուղապետարանի շենքերի վերանորոգման, համայնքի մարզադաշտի ցանկապատման և կառուցապատման աշխատանքները չեն կատարվել:

Համայնքի ղեկավարի կողմից օրենքով սահմանված ժամկետում չի կազմվել համայնքի 2013-2016թթ. զարգացման ծրագիրը և չի ներկայացվել համայնքի ավագանու հաստատմանը:

3) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթների՝ համայնքի ավագանին 15.12.2010թ. արձ. թիվ 8, 14.01.2012թ. թիվ 27-Ն և 25.12.2012թ. թիվ 30-Ն որոշումներով հաստատել է համայնքի 2011, 2012 և 2013 թվականների բյուջեները: Առանձին իրավական ակտեր չունեն վերնագրեր, չեն պարունակում հղումներ, թե դրանք ՀՀ օրենսդրության որ նորմատիվ իրավական ակտի մասի համաձայն կամ ի կատարումն են ընդունվել, ճիշտ չեն սահմանվել հերթական համարները և կցված չեն իրավական ակտով հաստատված բաղկացուցիչ մասերը՝ հավելվածները: /հիմք՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ մաս, 38-րդ հոդվածի 2-րդ մաս, 40-րդ հոդվածի 1-ին կետ և 43-րդ հոդված/:

Համայնքի ավագանին 15.12.2010թ. արձ. թիվ 8, 12.01.2012թ. թիվ 2 և 25.12.2012թ. թիվ 24 որոշումներով հաստատել է համայնքի 2010, 2011 և 2012 թվականների բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները: Որոշումներին կցված չեն նշված իրավական ակտերով հաստատված հավելվածները: Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ մասի՝ հավելվածները իրավական ակտի բաղկացուցիչ մասերն են, դրանք պետք է կցվեն իրավական ակտին: Որոշումներում՝ որոնք պարունակում են նորմատիվ բնույթի դրույթներ, հերթական համարներից հետո չեն նշվել «Ն» տառը /հիմք՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մաս, 38-րդ հոդվածի 3-րդ մաս/: Բացի այդ, առանձին որոշումներում բացակայում են համայնքի ավագանու անդամների ստորագրությունները: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ավագանու որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ավագանու անդամների ազգանունները, որոնց դիմաց նրանք ստորագրում են:

Համայնքի ավագանու 25.06.2010թ. թիվ 26-Ն, 27-Ն, 24.08.2010թ. թիվ 33-Ն, 25.10.2010թ. թիվ 37-Ն, 28.02.2011թ. թիվ 2, 30.04.2011թ. թիվ 7, 21.06.2011թ. թիվ 12, 25.10.2011թ. թիվ 21-Ա, 22, 24, 12.01.2012թ. թիվ 7 և 25.02.2013թ. թիվ 19 որոշումներով համայնքի բյուջեներում կատարվել են փոփոխություններ: Առանձին որոշումներում՝ որոնք

պարունակում են նորմատիվ բնույթի դրույթներ, հերթական համարներից հետո չեն նշվել <<Ն>> տառը /հիմք՝ <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մաս, 38-րդ հոդվածի 3-րդ մաս/:

- 4) Համայնքի ավագանին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված կարգով համայնքի բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն չի իրականացրել:

Համայնքի ղեկավարը խախտելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ համայնքի բյուջեի կատարման վերաբերյալ եռամսյակային հաղորդումներ չի ներկայացրել համայնքի ավագանուն:

<<ՎՀԱ>> ծրագրով նախատեսված համայնքի խմելու ջրի ջրագծի վերանորոգման աշխատանքների իրականացման համար համայնքի ավագանու 2010 թվականի օգոստոսի 24-ի թիվ 34-Ն որոշմամբ հատկացվել է 150.000 դրամ:

- 5) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ համայնքի ավագանու 25.06.2010թ. թիվ 28, 24.08.2010թ. թիվ 32, 25.10.2010թ. թիվ 39, 28.02.2011թ. թիվ 3, 30.04.2011թ. թիվ 8, 21.06.2011թ. թիվ 13, 15-Ա, 25.10.2011թ. թիվ 16, 17, 19-Ա, 12.01.2012թ. թիվ 4, 15.04.2012թ. թիվ 10, 14, 15, 16-Ա, 17-Ա, 19, 20, 21-Ա և 25.02.2013թ. թիվ 17-Ա, 18 որոշումներով դրամական օգնություններ են տրամադրվել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին: Առանձին որոշումներում ճիշտ չեն սահմանվել հերթական համարները /25.02.2013թ. թիվ 1 որոշմանը հաջորդել է թիվ 17-Ա որոշումը/:

- 6) Համայնքի ավագանու 2011 թվականի ապրիլի 30-ի թիվ 6 որոշմամբ համայնքի սեփականություն համարվող նախկին կոլտնտեսությանը պատկանող պահեստի զբաղեցրած 1045մ հողատարածքը 139.220 դրամ կադաստրային արժեքով ուղղակի վաճառքով օտարվել է Միքայել Բաղդասարյանին: Համայնքի ավագանին որոշումն ընդունելիս հղում է կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածին, որը համայնքի ղեկավարի գործունեությունն է առևտրի և ծառայությունների քնազավառում: Որոշումն ընդունելիս համայնքի ավագանին պետք է ղեկավարվեր «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով:

Համայնքի ավագանու 2012 թվականի ապրիլի 15-ի թիվ 9-Ն որոշմամբ Ավետիք Բուլոյանին սեփականության իրավունքով պատկանող սպասարկման օբյեկտի զբաղեցրած 0.0284 հա հողատարածքն օտարվել է ուղղակի վաճառքով 63.000 դրամ կադաստրային արժեքով:

Համայնքի ավագանու 2012 թվականի թիվ 18 որոշմամբ համայնքի սեփականություն հանդիսացող խմելու ջրի ներտնտեսային ցանցը անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով հանձնվել է <<Շիրակ-ջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ին: Համաձայն <<Իրավական

ակտերի մասին» << օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի՝ նշված չեն իրավական ակտի ընդունման ամիսը, ամսաթիվը:

- 7) Համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման նկատմամբ համայնքի ավագանու կողմից վերահսկողություն չի իրականացվել:
- 8) Համայնքի ղեկավարի օրենքին և իրավական այլ ակտերին հակասող որոշումների դատական կարգով վիճարկումներ չեն եղել:
- 9) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» << օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ համայնքի ավագանին 14.01.2012թ. թիվ 31 որոշմամբ սահմանել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը 2012 թվականի համար: Իսկ համայնքի ղեկավարի վարձատրության չափի սահմանման մասին 2011 և 2013 թվականների համար արձանագրություններ չեն կազմվել:
- 10) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» << օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի դրույթների՝ Սպանդարյանի համայնքային ենթակայության նախադպրոցական հիմնարկը <<Սպանդարյանի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու մասին համապատասխան իրավական ակտ չի ընդունվել:
- 11) Համայնքի ղեկավարի 2011 թվականի փետրվարի 23-ի թիվ 3 որոշմամբ Գինո Հարությունյանը ազատվել է Սպանդարյանի համայնքային ենթակայության նախադպրոցական հիմնարկի տնօրենի պաշտոնից և նշանակվել է <<Սպանդարյանի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում:
- 12) Առևտրի, հասարական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնների հաստատման վերաբերյալ «Տեղական ինքնակառավարման մասին» << օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի դրույթը հանված է:
- 13) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» << օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի դրույթների՝ համայնքի ավագանին 15.12.2010թ. արձ. թիվ 8, 14.01.2012թ. թիվ 27 և 25.12.2012թ. թիվ 25-Ն որոշումներով սահմանել է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր՝ 2011, 2012 և 2013 թվականների համար: Որոշումները չեն համապատասխանում <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 13-րդ մասի դրույթներին, համաձայն որոնց՝ իրավական ակտերում հարկերի, տուրքերի, պարտադիր այլ վճարների չափերը սահմանվում են բառերով: Բացի այդ տեղական հարկերի տեսակների ու դրույքաչափերի սահմանման վերաբերյալ համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:

Առանձին որոշումներ չունեն վերնագրեր, չեն պարունակում հղումներ, թե դրանք << օրենսդրության որ նորմատիվ իրավական ակտի մասի համաձայն կամ ի կատարումն են ընդունվել: Որոշումներին կցված չեն իրավական ակտով հաստատված բաղկացուցիչ մասերը՝ հավելվածները և հերթական համարներից հետո չեն նշվել <<Ն>> տառը: /հիմք՝ <<Իրավական ակտերի մասին>> << օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մաս և 38-րդ հոդվածի 3-րդ մաս, 37-րդ հոդվածի 5-րդ մաս, 40-րդ հոդվածի 1-ին կետ և 43-րդ հոդված/:

- 14) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի դրույթների՝ համայնքի ավագանին 14.01.2012թ. թիվ 30-Ն և 25.12.2012թ. թիվ 32 որոշումներով սահմանել է «Սպանդարյանի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հաճախող երեխաների ծնողական վճարների դրույքաչափերը՝ 2012 և 2013 թվականների համար: Իսկ «Սպանդարյանի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հաճախող երեխաների ծնողական վճարի դրույքաչափը 2011 թվականի համար սահմանելու մասին որոշում համայնքի ավագանին չի կայացրել:
- 15) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթների՝ համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի կողմից համայնքի ավագանուն առաջարկություն ներկայացնելու մասին արձանագրություն չի կազմվել:
- 16) Համայնքային նշանակության փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման և վերանվանման վերաբերյալ համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:
- 17) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի դրույթների՝ համայնքի ավագանին 15.12.2010թ. արձ. թիվ 8, 14.01.2012թ. թիվ 26 և 25.12.2012թ. թիվ 31 որոշումներով հաստատել է գյուղապետարանի աշխատակազմի և «Սպանդարյանի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ 2011, 2012 և 2013 թվականների համար: Որոշումներին կցված չեն նշված իրավական ակտերով հաստատված հավելվածները:
- Համայնքային ծառայության պաշտոնների մասով աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը և (կամ) հաստիքացուցակը հաստատելու, ինչպես նաև փոփոխելու և (կամ) լրացնելու, համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինն դիմելու մասին համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:
- 18) Համայնքի ավագանու կողմից չի հաստատվել բնակավայրի քաղաքաշինական կանոնադրությունը:
- 19) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթների՝ համայնքի ավագանին 15.12.2010թ. արձ. թիվ 8, 14.01.2012թ. թիվ 28 և 25.12.2012թ. թիվ 29-Ա որոշումներով հաստատել է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ 2011, 2012 և 2013 թվականների համար: Որոշումներին կցված չեն նշված իրավական ակտերով հաստատված հավելվածները:

## 1. Ֆինանսների բնագավառ

1) Սպանդարյան համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն կազմել և սահմանված ժամկետներում համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացրել համայնքի 2010-2013 թվականների բյուջեների նախագծերը՝ (համայնքի ավագանու որոշումներ՝ 15.12.2010թ. արձ. թիվ 8, 14.01.2012թ. թիվ 27-Ն և 25.12.2012թ. թիվ 30-Ն), դրանում առաջարկվող փոփոխությունները (համայնքի ավագանու որոշումներ՝ 25.06.2010թ. թիվ 26-Ն, 27-Ն, 24.08.2010թ. թիվ 33-Ն, 25.10.2010թ. թիվ 37-Ն, 28.02.2011թ. թիվ 2, 30.04.2011թ. թիվ 7, 21.06.2011թ. թիվ 12, 25.10.2011թ. թիվ 21-Ա, 22, 24, 12.01.2012թ. թիվ 7 և 25.02.2013թ. թիվ 19), տարեկան հաշվետվությունները (համայնքի ավագանու որոշումներ՝ 15.12.2010թ. արձ. թիվ 8, 12.01.2012թ. թիվ 2 և 25.12.2012թ. թիվ 24):

Համայնքի ղեկավարը խախտել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը և սահմանված կարգով համայնքի բյուջեի կատարման ընթացքի մասին համայնքի ավագանուն եռամսյակը մեկ հաղորդում չի ներկայացրել:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 68-րդ և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածների՝ համայնքի 2010-2012թթ. բյուջեների կատարողականի տարեկան հաշվետվություններն ավագանին քննարկել և հաստատել է առանց անդիտորական եզրակացության:

2010 թվականի համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 28475.0 հազ. դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 26440.1 հազ. դրամ, կամ եկամուտների պլանը կատարվել է 92.9 % -ով:

Համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 6843.3 հազ. դրամ սեփական եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 4808.4 հազ. դրամ, կամ սեփական եկամուտների պլանը կատարվել է 70.3 % -ով:

2011 թվականի համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 25972.0 հազ. դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 24198.6 հազ. դրամ, կամ եկամուտների պլանը կատարվել է 93.2 % -ով:

Համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 4979.3 հազ. դրամ սեփական եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 3205.9 հազ. դրամ, կամ սեփական եկամուտների պլանը կատարվել է 64.4 % -ով:

2012 թվականի համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 25374.1 հազ. դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 25445.0 հազ. դրամ, կամ եկամուտների պլանը կատարվել է 100.2 % -ով:

Համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 4201.6 հազ. դրամ սեփական եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 4272.5 հազ. դրամ, կամ սեփական եկամուտների պլանը կատարվել է 101.6% -ով:

Համայնքի տարեկան ճշտված բյուջեով նախատեսված 27996.2 հազ. դրամ եկամուտների դիմաց 01.06.2013 թվականի դրությամբ փաստացի մուտքը կազմել է 10766.4 հազ. դրամ:

Համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 4649.0 հազ. դրամ սեփական եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 1038.4 հազ. դրամ:

- 2) Համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացրել է ավագանու հաստատմանը (ավագանու որոշումներ՝ 15.12.2010թ. արձ. թիվ 8, 14.010.2012թ. թիվ 27 և 25.12.2012թ. թիվ 25-Ն):
- 3) Համայնքի ղեկավարը ոչ լրիվությամբ է իրականացրել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2.1 մասի դրույթով սահմանված՝ տեղական տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքային սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումների կազմակերպման և վերահսկման վերաբերյալ պարտադիր լիազորությունները:
- 4) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2.2 մասի պահանջի, համայնքի ղեկավարի կողմից տեղական տուրքեր և վճարներ չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցներ չեն կիրառվել:
- 5) Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերի սահմանման վերաբերյալ որոշման նախագծեր համայնքի ղեկավարը չի ներկայացրել ավագանու հաստատմանը:
- 6) Համայնքի ղեկավարը 2010-2011թթ. չի ապահովել համայնքի բյուջեի եկամուտների ամբողջական կատարումը:

Համայնքում 2012 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ բյուջեի ծախսերի տնտեսագիտական հոդվածներով դեբիտորական պարտքը կազմում է 0 (զրո) դրամ:

2010 թվականին համայնքի բյուջեով նախատեսված 29927.0 հազ. դրամ ծախսերի դիմաց փաստացի ծախսը կազմել է 26984.0 հազ. դրամ կամ ծախսերի պլանը կատարվել է 90.1 % -ով:

2011 թվականին համայնքի բյուջեով նախատեսված 26880.2 հազ. դրամ ծախսերի դիմաց փաստացի ծախսը կազմել է 22915.2 հազ. դրամ, կամ ծախսերի պլանը կատարվել է 85.2 % -ով:

2012 թվականին համայնքի բյուջեով նախատեսված 27565.6 հազ. դրամ ծախսերի դիմաց փաստացի ծախսը կազմել է 26525.0 հազ. դրամ կամ ծախսերի պլանը կատարվել է 96.2 % -ով:

2013 թվականի տարեկան ճշտված պլանով նախատեսված 29107.6 հազ. դրամ ծախսերի դիմաց փաստացի ծախսը կազմում է 9554.0 հազ. դրամ:

Համայնքի վարչական բյուջե հավաքագրված գումարները հիմնականում ծախսվել են աշխատավարձերի, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների, էլեկտրաէներգիայի, կոմունալ վճարումների, համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնություն տրամադրելուն և այլ ծախսերի համար:

## **2. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ**

- 1) Համայնքի ղեկավարի կողմից համայնքի գլխավոր հատակագծի, հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների, գոտիավորման այլ փաստաթղթեր չեն կազմվել:
- 2) Համայնքի ղեկավարի կողմից քաղաքաշինական կադաստրի սահմանված կարգով վարման և համայնքի քաղաքաշինական կանոնադրության կազմման վերաբերյալ որոշումներ չեն ներկայացվել համայնքի ավագանու հաստատմանը:
- 3) Համայնքում միջավայրի քաղաքաշինական փոփոխություններ, կառուցապատողներին ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման, ճարտարապետաշինարարական նախագծերի համաձայնեցման գործընթացներ չեն իրականացվել:
- 4) Համայնքի ղեկավարի կողմից շինարարության (քանդման) թույլտվություն չի տրամադրվել:
- 5) Համայնքի ղեկավարի կողմից ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտեր չեն ձևակերպվել:
- 6) Համայնքում ինքնակամ շինարարության իրականացման դեպքեր չեն հայտնաբերվել:
- 7) Համայնքի ղեկավարի կողմից շենքերի և շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքով, համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ սահմանված կարգով վերահսկողություն իրականացնելու վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:
- 8) Համայնքի ղեկավարի կողմից իրականացվել է համայնքային սեփականություն համարվող շենքերի ու շինությունների հաշվառում, կազմվել է սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը և ներկայացվել է համայնքի ավագանու հաստատմանը:
- 9) Համայնքի ղեկավարի կողմից համայնքի քաղաքաշինական կանոնադրությանը համապատասխան արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն չի տրամադրվել:
- 10) Համայնքի ղեկավարի կողմից համայնքային սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, ոռոգման ու ջեռուցման ցանցերի և այլ կառուցվածքների շահագործման կազմակերպման և կառավարման վերաբերյալ գործառույթներ չեն իրականացվել:
- 11) Համայնքում չկան բազմաբնակարան բնակելի շենքեր: Այդ իսկ պատճառով համապատասխան գործառույթներ չեն իրականացվել:



### 3. Հողագրագործման բնագավառ

1) Սպանդարյանի գյուղական համայնքը համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով կառավարության սահմանված կարգով կազմված հողերի գոտիավորման և օգտագործման սխեմա չունի:

2) Սպանդարյանի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են ընդամենը 314.01հա, այդ թվում՝ վարելահող-80.94հա, արոտ-215.64հա և այլ հողեր-17.43հա:

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 80.94հա վարելահողերը և 215.64հա արոտները օրենքով սահմանված կարգով վարձակալության տրամադրված չեն:

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի համար՝

01.05.2010–31.12.2010թ. ժամանակահատվածում բյուջեով նախատեսված 939.3հազ.դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 686.5հազ դրամ, համայնքի հաշվարկային հաշվին մուտքագրվել է 684.7հազ. դրամ, այսինքն՝ բյուջեով նախատեսվածից պակաս է մուտքագրվել 254.6հազ.դրամ:

2011թ. բյուջեով նախատեսված 830.0հազ. դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 462.9հազ. դրամ, համայնքի հաշվարկային հաշվին մուտքագրվել է 461.9հազ. դրամ, այսինքն՝ բյուջեով նախատեսվածից պակաս է մուտքագրվել 368.1հազ.դրամ:

2012թ. բյուջեով նախատեսված 398.6հազ. դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 641.2հազ դրամ, համայնքի հաշվարկային հաշվին մուտքագրվել է 639.5հազ. դրամ, այսինքն՝ բյուջեով նախատեսվածից ավել է մուտքագրվել 240.9հազ.դրամ:

01.01.2013-01.06.2013թ. դրությամբ բյուջեով նախատեսված 86.7հազ.դրամ վարձավճարի դիմաց գանձումներ չեն իրականացվել:

01.01.2013 թվականի դրությամբ վարձավճարի ապառքներ չկան:

01.05.2010թ.-01.06.2013թ. ժամանակահատվածում համայնքային և պետական սեփականություն համարվող հողամասերի օտարում չի իրականացվել:

3) ՀՀ Շիրակի մարզի Սպանդարյան համայնքի ղեկավարի կողմից առանց պայմանագրեր կնքելու և պետական գրանցման ենթարկելու 2010թ. մինչև օրս համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողերը օգտագործման է տրամադրել ՀՀ Շիրակի մարզի Սպանդարյան համայնքի բնակիչներ՝ Արթուր Հովհաննիսյանին, Ալեքսան Խաչատրյանին, Մամլակ Խաչատրյանին, Դոնարա Սահակյանին, Ավետիք Հակոբյանին և օգտագործման դիմաց գանձում է վարձավճար: Այսպիսով ՀՀ Շիրակի մարզի Սպանդարյան համայնքի ղեկավարի կողմից խախտվել է համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման տրամադրման կարգը

/Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրք 76-80-րդ հոդվածներ/, որի համար Հայաստանի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 56'-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան սահմանված է պատասխանատվություն:

Սպանդարյան համայնքի գյուղացիական տնտեսություններում հաշվառված 1246 գլուխ խոշոր եղջերավոր անասունների առկայության պայմաններում 215.64 հա արոտները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտագործման տրամադրված չէ: Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկվել ապօրինի հողօգտագործումը կանխելու և արոտի օգտագործումը օրենքով սահմանված կարգով կազմակերպելու ուղղությամբ:

- 4) 01.05.2010թ.-01.06.2013թ. ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից ապօրինի հողօգտագործման դեպքեր չեն արձանագրվել:
- 5) Օրենքով սահմանված կարգով իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռի կազմման գործընթացներ:
- 6) Համայնքի վարչական տարածքում գտնվող թվով 4 գեոդեզիական կետերի և սահմանանիշերի պահպանության նկատմամբ իրականացվել է վերահսկողություն:

#### **4. Տրանսպորտի բնագավառ**

- 1) Համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանման և շահագործման կազմակերպման գործառույթներ չեն իրականացվել:
- 2) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի ու համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների և կազմակերպությունների գործունեության կազմակերպման և կառավարման գործառույթներ չեն իրականացվել:
- 3) Իրավասու մարմինների ներկայացմամբ համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության նշանների տեղակայման ու հանման հաստատման և թույլատրման գործառույթներ չեն իրականացվել:
- 4) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհներին վերաբերող մասով լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմա չի կազմվել և համայնքի ավագանու հաստատմանը չի ներկայացվել (համայնքային ենթակայության ճանապարհների մասով) և այդ սխեմային համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի

ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

### **5. Առևտրի և ծառայությունների բնագավառ**

- 1) ՀՀ Շիրակի մարզի Սպանդարյան համայնքում գործում են ընդամենը 7 առևտրի օբյեկտներ:  
2010թ. նոյեմբերի 1-ից մինչև 2013թ. հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում համայնքում գործող առևտրի օբյեկտներում ոչ մի անգամ ստուգում չի անցկացվել և ոչ մի խախտում չի արձանագրվել: Սպանդարյան համայնքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում ստուգման արդյունքների ոչ մի ակտ չի կազմվել, գործող առևտրի օբյեկտների նկատմամբ ոչ մի տույժ չի կիրառվել:
- 2) Ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար փաստացի գործող թվով 7 առևտրի օբյեկտներից ոչ մեկին թույլտվություն չի տրվել, ոգելից խմիչքը և ծխախոտը համայնքում վաճառվում են առանց թույլտվության՝ անօրինական կարգով:
- 3) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու համար դիմողներ չեն եղել:
- 4) Համայնքի տարածքում առևտրի հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքների (սաունաների), խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով թույլտվության տրամադրման համար դիմողներ չեն եղել:
- 5) Համայնքի տարածքում «Թանկարժեք մետաղների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի առաջին մասին համապատասխան՝ թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մարածախ առքուվաճառքի թույլտվության համար դիմողներ չեն եղել:
- 6) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազի վաճառքի թույլտվության համար դիմողներ չեն եղել:  
Համայնքի ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման տարեկան ծրագրում համայնքի մասնակցության մասին առաջարկություններ չեն ներկայացվել:

### **7. Այլ բնագավառներ**

- 1) Վերոնշյալ ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից հրավիրվել և անցկացվել են համայնքի ավագանու 17 նիստեր:  
Համայնքի ղեկավարը չի ապահովել ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ համայնքի ավագանու նիստ գումարելու «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջը: 2011 թվականի հունիսի 21-ին անցկացված

ավագանու նիստից հետո ավագանու հերթական նիստ է հրավիրվել 2011 թվականի հոկտեմբերի 25-ին:

Համայնքի ավագանին վերազանցելով իր լիազորությունները, կայացրել է մի շարք որոշումներ՝ շինարարության թույլտվության վերաբերյալ /25.06.2010թ. թիվ 29-Ա, .24.08.2010թ. թիվ 35-Ա/: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 91 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման կարգի» 7-րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում շինարարության թույլտվությունը կառուցապատողին տալիս է համայնքի ղեկավարը:

Առանձին որոշումների վերնագրերն ու բովանդակությունները չեն համապատասխանում միմյանց /համ.ավագանու որոշում՝ 25.10.2010թ. թիվ 38/:

Առանձին որոշումների պաշտոնական տեքստի վերջին էջի տեքստից հետո չի նշված պաշտոնատար անձի կողմից իրավական ակտի ստորագրման տարին, ամիսը, ամսաթիվը և ընդունման վայրը /հիմք «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մաս/:

Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը խախտելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի դրույթները, չի ապահովել ավագանու որոշումների առաքումը մարզպետարան՝ յոթնօրյա ժամկետում:

- 2) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1<sup>1</sup> կետի դրույթների՝ համայնքի ղեկավարն անհատական ակտեր ընդունելուց հետո դրանք սահմանված ժամկետում չի ուղարկել համայնքի ավագանու անդամներին և փակցրել համայնքի ավագանու նստավայրում:
- 3) Համայնքի ղեկավարի կողմից օրենքով սահմանված ժամկետում չի կազմվել և համայնքի նորընտիր ավագանու հաստատմանը չի ներկայացվել համայնքի 2013-2016թթ. զարգացման ծրագիրը:
- 4) Համայնքի ղեկավարը խախտել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթները և համայնքի ավագանու հաստատմանը չի ներկայացրել գյուղապետարանի աշխատակազմի, ինչպես նաև «Սպանդարյանի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունները հաստատելու մասին որոշումների նախագծերը:
- 5) Համայնքի ղեկավարի կողմից աշխատակազմի կառուցվածքի վերաբերյալ որոշման նախագիծ և դրանում առաջարկվող փոփոխություն ավագանու հաստատմանը չի ներկայացվել, դրա անհրաժեշտությունը չլինելու պատճառով:
- 6) Համայնքի ղեկավարը աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշումների նախագծերը 2011, 2012 և 2013 թվականների համար ներկայացրել է համայնքի ավագանու հաստատմանը:

Համայնքի ղեկավարի կողմից աշխատակազմի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերի փոփոխությունների վերաբերյալ որոշումների նախագծերը ներկայացվել է համայնքի ավագանու հաստատմանը:

- 7) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների՝ համայնքի ղեկավարը համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպման մասին 2011 թվականի փետրվարի 23-ի թիվ 3 որոշման նախագիծը համայնքի ավագանու հաստատմանը չի ներկայացրել:
- 8) Համայնքի ղեկավարի կողմից համայնքային ենթակայության առևտրային կազմակերպությունների խորհրդների և վերստուգիչ մարմինների կազմերի վերաբերյալ որոշման նախագծեր համայնքի ավագանու հաստատմանը չի ներկայացվել:
- 9) Համայնքի ղեկավարի 2011 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 2 կարգադրությամբ Արտյոմ Խաչատրյանը ազատվել է համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնից:  
Համայնքի ղեկավարն առանց համապատասխան իրավական ակտ արձակելու էրիկ Խաչատրյանին նշանակել է համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում:
- 10) Համայնքի ավագանու կողմից Սպանդարյանի համայնքային ենթակայության նախադպրոցական հիմնարկի տնօրենի պաշտոնից ազատման և «Սպանդարյանի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակման վերաբերյալ համապատասխան որոշումներ չեն կայացվել:
- 11) Համայնքի ղեկավարի կողմից տեղական հանրաքվե նշանակելու մասին որոշման նախագիծ համայնքի ավագանու հաստատմանը չի ներկայացվել:
- 12) Վերոնշյալ ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների համայնքների հետ համագործակցության մասին պայմանագրեր չեն կնքվել: Միջհամայնքային միավորում ստեղծելու, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու և դրանց անդամավճարները մուծելու մասին որոշման նախագծեր ավագանու հաստատմանը չի ներկայացվել:
- 13) Համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի կողմից համայնքի ավագանուն առաջարկություն ներկայացնելու մասին արձանագրություն չի կազմվել:
- 14) Համայնքի ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ համայնքի ավագանուն առաջարկ չի ներկայացվել:
- 15) Համայնքի ղեկավարի կողմից համայնքի, փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկների անվանման և վերանվանման վերաբերյալ համայնքի ավագանուն առաջարկ չի ներկայացվել:
- 16) Վերոնշյալ ժամանակահատվածում համայնքի ղեկավարը շինությունների համարակալման (հասցեավորման) վերաբերյալ կայացրել է թվով 3 որոշումներ:

17) Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 23 որոշում և արձակվել 6 կարգադրություն:

Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի դրույթների՝ համայնքի ղեկավարի որոշումները և կարգադրությունները չեն պարունակում հղումներ, թե դրանք ՀՀ օրենսդրության որ նորմատիվ իրավական ակտի մասի համաձայն կամ ի կատարումն են ընդունվել կամ կատարված հղումները թերի են:

Համայնքի ղեկավարի կողմից արձակված առանձին կարգադրություններ չունեն ամիս, ամսաթիվ:

Համայնքի ղեկավարը վերազանցելով իր լիազորությունները 2011 թվականի փետրվարի 23-ի թիվ 7 կարգադրությամբ գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներին շնորհել է 1-ին և 2-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճաններ, երբ այդ իրավասությունը վերապահված է գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարին:

18) Օրենքով, կառավարության սահմանած կարգով ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ որպես պետության պատվիրակված լիազորություն, համայնքի ղեկավարի կողմից կազմակերպվել և ղեկավարվել է համայնքում անասնաբուժական ծառայությունը: Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումների, կենդանիների հիվանդությունների կանխարգելման աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:

20) Համայնքի ղեկավարի կողմից համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրների վարման աշխատանքներ չեն իրականացվել:

21) Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել օրենքով կամ կառավարության սահմանած կարգով քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, ինչպես նաև տեխնոլոգիական և տարերային աղետների վտանգների նվազեցման ու հետևանքների վերացման հետ կապված աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:

22) Գյուղապետարանում սահմանված կարգով վարվում է համայնքի բնակիչների հաշվառման գիրք (ծխամատյան) և կազմակերպվում է համայնքի բնակիչների հաշվառումը:

23) Վերոնշյալ ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում ներկայացնելու դեպքեր չեն արձանագրվել:

24) Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կատարվում են քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության են առնվում քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկվում են համապատասխան միջոցներ:

25) Համայնքի ղեկավարը 2011 թվականի մայիսի 24-ի թիվ 6 որոշմամբ սահմանված կարգով ներկայացրել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով և համայնքի ավագանու 2011 թվականի հունիսի 29-ի թիվ 14 որոշմամբ հաստատվել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը:


- 26) Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու և այդ ծնունդների պետական գրանցումներն ապահովելու ուղղությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով համայնքի ղեկավարի կողմից տրվել են երեխայի ծննդի պետական գրանցման վերաբերյալ գրավոր հայտարարություններ:
- 27) Գյուղապետարանում օրենքով սահմանված կարգով վարվում է համայնքի գինապարտների գրանցամատյան, նրանց վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև համայնքի բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները ներկայացվել են տարածքային գինվորական կոմիսարիատ:


### ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՄ


1. Համայնքի ղեկավարը խախտել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթները և համայնքի ավագանու հաստատմանը չի ներկայացրել գյուղապետարանի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին որոշման նախագիծը:
2. ՀՀ կառավարության սահմանված կարգով գյուղապետարանում վարվում են համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու իրավական ակտերի հաշվառման մատյաններ:  
Վերոնշյալ ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 23 որոշում և արձակվել 6 կարգադրություն:  
Գյուղապետարանում վարվող գրանցամատյանները սահմանված կարգով համարակալված, թելակարված և հաստատված են համայնքի ղեկավարի կողմից:
3. Ուսումնասիրության ենթարկված բոլոր իրավական ակտերը գրառված են իրավական ակտերի հաշվառման մատյաններում:
4. Սպանդարյանի համայնքն առանձնացված ստորաբաժանումներ չունի:
5. Սպանդարյանի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները թվով 4-ն են՝ աշխատակազմի քարտուղար, աշխատակազմի գլխավոր մասնագետ /թափուր/, աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ և աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ: Գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների մասով հաստիքացուցակը համապատասխանում է համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկին, ինչպես նաև պաշտոնային դրույթաչափերը համապատասխանում են «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի և «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:
6. Համայնքի ղեկավարի 2011 թվականի փետրվարի 23-ի թիվ 6 որոշմամբ հաստատվել է գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագիրը, սակայն <<իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ նույն հարցի վերաբերյալ նախկին իրավական ակտերն ուժը կորցրած չեն ճանաչվել:
7. Համայնքային ծառայողների անձնական գործերի վարումը իրականացվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարի կողմից սահմանված կարգի խախտումներով:

Անձնական գործերից բացակայում են վերագրները, համայնքային ծառայողի կողմից իր անձնական գործի բոլոր նյութերին և իր գործունեության գնահատականներին ծանոթացված լինելու մասին վկայող փաստաթղթերը, տվյալ պաշտոնում նշանակելու և փորձաշրջան սահմանելու մասին իրավական ակտերը:

8. Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անհատական կազմի, ինչպես նաև համայնքի ավագանու կողմից հանձնաժողովի կազմում ընդգրկվող համայնքի ավագանու անդամների քանակական և անհատական կազմի հաստատման վերաբերյալ արձանագրություններ չեն կազմվել և 20-օրյա ժամկետում չի հրավիրվել հանձնաժողովի աշխատակարգային նիստ ու չի ընտրվել հանձնաժողովի նախագահի տեղակալ:
9. Համայնքի ղեկավարը համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու մասին որոշումներ չի կայացրել:
10. Համայնքի ղեկավարի կողմից սահմանված կարգով չի հաստատվել աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը:
11. Գյուղապետարանի աշխատակազմում չեն վարվում համայնքային ծառայության թափուր տեղերի համար անցկացվող մրցույթներին դիմած քաղաքացիների տվյալների գրառման, համայնքային ծառայողների վերապատրաստման հաշվառման, ինչպես նաև համայնքային ծառայողների անձնական գործերի հաշվառման մատյաններ:
12. Համայնքային ծառայության պաշտոնները զբաղեցնողների կրթությունը, համապատասխան ստաժը և այլ տվյալներ համապատասխանում են համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և տվյալ պաշտոնի անձնագրի պահանջներին:
13. Համայնքի ղեկավարի կողմից ՀՀ Շիրակի մարզպետարան ներկայացված գրանցամատյանային (Ձև NN 1, 2) տվյալները արժանահավատ են:
14. Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար հրապարակվել է հայտարարություն: Սակայն մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել և մրցույթը չի կայացել:
15. Գյուղապետարանում սահմանված կարգով վարվում է զինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյան:
16. Վերոնշյալ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության կողմից համայնքում ուսումնասիրություններ չեն կատարվել և թերություններ չեն հայտնաբերվել:

 Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

 Մ. ԳՅՈՂԱԿՅԱՆ

 Զ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

 Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



h. 9

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*[Handwritten signature]*

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

*[Handwritten signature]*

Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

*[Handwritten signature]*

Ս. ՄԵԼՈՅԱՆ

*[Handwritten signature]*

Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ